

Tous sont levés de grand matin.
 Me voici vierge, à votre fenêtre,
 Pour être votre Valentine.
 Alors, il se leva et mit ses habits,
 Et ouvrit la porte de sa chambre;
 Et vierge, elle y entra, et puis oncques vierge
 Elle n'en sorti.

Ա.

ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆ, ամսաթիւրթ, քառասներորդ եօթներորդ տարի. Հատոր խէ. Վենետիկ, ի տպարանի Ս. Ղազարու, 1889 թ., Յունւար, Փետրւար, Մարտ և Ապրիլ (128 երես ընդամենը):

Վենետիկի Միթիթարեանների «Բազմավէպը» կարող է համարուել թարգման նոցա գաղափարների և աշխարհակցողութեան. Տեսնենք ինչ է գրում, ինչ մտածում և զգում լուսաւորեալ Եւրոպայում գտնուող, համալսարաններով չըջապատւած, դարգանալու բոլոր չաջող պալմանները ունեցող այդ դեռ ևս անցեալ դարու երկրորդ կիսում հաստատւած Միաբանութիւնը:

«Բազմավէպի» չօղածները, ըստ բովանդակութեան, զետեղւած են 3 բաժիններում՝ Հալկականք, Բանասիրականք և Գիտականք. Յօղածներից շատերը «շարունակելի» են, բայց այդ չի խանգարում ընդհանուր հասկացողութիւն կազմելու նրանց բովանդակութեան և ուղղութեան մասին:

«Հալկականք»-ի չօղածներից ուշադրութեան արժանի են միայն Հ. Բ. Սարգիսեանի չօղածները: «Ազաթանդեղոս և իւր բազմադարեան գաղտնիքն» գրւածքի ներածութիւնից մենք իմանում ենք, որ Հ. Բ.

Սարգիսեանը պէտք է քննէ հետեւեալ խնդիրները. 1) Արդեօք Ազաթանդեղոսը ակնատես է եղել այն ղէպերին, որ նկարագրում է. ուրիշ խօսքերով՝ Ազաթանդեղոսը ժամանակակից է եղել Տրդատին ու ս. Գ. Լուսաւորչին, թէ ոչ. 2) Ազաթանդեղոսի պատմութիւնը ամբողջապէս պատկանում է Տրդատի քարտուղարի (Ազաթանդեղոսի) գրչին, թէ այդ մեղ հասած գիրքը կաղմած է այլ և այլ հեղինակութիւններից կամ, ինչպէս ինքը հեղինակն է ասում՝ «այլ և այլ հեղինակութեանց և գործոց կաղմակերպուած խմբագրութիւն մի»:

3) Այդ երկասիրութիւնը հալերէն գրւեց, թէ լուսարէն. 4) Այժմեան լուսարէն Ազաթանդեղոսի պատմութիւնը հալերէնի ընագիրն է, թէ ընդհակառակն հալերէն ընագրից վատուց եղած թարգմանութիւն. 5) «Լուսաւորչաւ կարծեցեալ ընդարձակ վարդապետութիւնը» ստուղի. հարադաս իցէ, թէ գործ վտնագունի ուրումն ժամանակաւ»:

Առ ալժմ հեղինակը միայն քննում է՝ ալդ խնդիրներին վերաբերեալ գրականութիւնը։ Առաջ բերե՞նք մի կոտոր հեղինակի դատողութիւններէից նորա իսկ լեզուով՝ ցոյց տալու համար թէ ինչ լեզուով է գրում և ինչ կարծիք ունի գիտնական քննադատութեան մասին Մխիթարեան Մխարանութեան ներկայ ամենատաղանդաւոր և գիտնական անդամներից մէկը։ Եւրոպական մի քանի գիտնականների քննադատութիւնը Ագաթանգեղոսի վերաբերեալ համարելով «չարձակողական», հալը սուրբը աւելացնում է. «իսկ տոհմալինք և տոհմալին լեզուին ծանօթ եւրոպացիք ոմանք՝ Մխիթարեան Հարց հետ պահպանողական դրութեամբ լառաջելով կը կոծին և մրցին, ունելով ի միջի զուկեխնձոր զուկեգրիչ երկն Ագաթանգեղեալ գրոց։ Վերջինները՝ իւրեանց հալքների հնաւանդ լիշատակարանաց վրա լարեալ և պանծացեալ՝ վարկ պարագի լոմանց գուցէ թէ հնամուլք (միթէ հէնց «Բաղամալէպ») ի լեզուն իրաւունք չի տալիս աղալէս մտածելու») իսկ կոչեցան. սակալն առաջնոց քմահաճոյ աւելումունքը չի գործելէ զատ, ինչպէս փորձն ինքնին ցուցուց, ժամանակին աջակցութեամբը մեծամեծ ծառայութիւններ ևս մատուցին մինչև ցալսօր տոհմալին մատենագրութեան և պիտի չը դադարեն մատուցանել. վասն զի ժամանակեան նորութեանց (?) և հնութեան ճարտար գործիչներ լինելով՝ մէկ նշխար մի կամ նշմար չեն ուղեր վերցնել կամ փոփոխել, առանց նոցա տեղ փոխանակելի առձեռն պատ-

րաստ նիւթեր ունենալու» (եր. 10)։

Նոյն հեղինակին է պատկանում «Տեսութիւն տառագարձութեան խնդրուն և հալքէն նշանագրոց վրա» լօղածը։ Ալդ խնդիրների մասին թէ Պօլսեցի «դիտնական» էֆէնդիները, թէ Վիէննալի և Վենետիկի Մխիթարեանները անբաւ թուղթ, թանաք և ժամանակ են կորցրել և շարունակում են ալդ անել — էլ սոփեստութիւն, դաղափարների շփոթում, հակասութիւն ասես չի մնացել, որ չ'անեն, միայն ցոյց տալու համար... որ առողջ մտքից և գիտնականօրէն մտածելու եղանակից բոլորովին զուրկ են։ Միմիայն ալն հանգամանքը, որ ալդ բոլորը գրած է եղել ամենաանճուռի, տաղտկացուցիչ, միին և խառնաշփոթ լեզուով, ծածկում էր ընթերցողներէից ալդ բոլոր մրոտած թղթերի անհեթեթ և ողորմելի բովանդակութիւնը։ Հ. Բ. Սարգիսեանի լօղածը զանազանում է մինչև ալժմ գրածներից՝ դատելու հիմնաւորութեամբ և հետևողութեամբ, թէ և Մխիթարեաններին չատուկ նոյն պաճուճաւոր, աւելորդաբանութիւններով հարուստ ոճը և հնի ու նորի խառնուրդ ներկայացնող լեզուն մարդուս մինչև զալրացնելը տաղտկացնում են։

Հ. Թորոսեանի «Նղնիկ և իւր երկասիրութիւնը» առ ալժմ ոչինչ նոր բան չի պարունակում իր մէջ, միայն լօղածի վերջի երեսից խմանում ենք, որ Նղնիկի գրքի մէջ, հալքսուրբի ասելով, չի կարելի գտնել «կապ մի լամաստից»։ Ի զուրէ նոյնպէս իբր թէ փնտուել «միութիւն ոչ եթէ գլխոց, ալ և պարբերութեանց» և ալն,

«բաց ի հաստատութիւն այս ամէն բանիցս», լետագայ թերթերում է խոստացուում:

Յետոյ դալիս է «Հալ թարգմանութեան և Ս. Գրոց կարգ ու դասաւորութիւնը» լուծածի սկիզբը: Եթէ պարզութեան համար դէն ձգենք լուծածի մի քանի նախադասութիւնները, ահա ինչ կ'իմանանք այդ մութ զրուածքի բովանդակութեան մասին.—

«Աստուածաշունչ գրոց մատենական դասակարգութիւնը ընդհանրապէս ժամանակագրական-պատմական է, թէ՛ չեբրայական և ի քաղղէացի բնագրին և թէ՛ ի լոյն թարգմանութեան Եօթնասնից: Մեր թարգմանութիւնն ալ այս վերջնոյս վրա՝ եղած ըլլալով, ալք բնական կարգը պահած է ի նմա, առանց դնելու խտիր ընդ նախնականն և ընդ երկրորդական կոչեցեալն, և ալդպէս գրչագրաց ի գրչագիրս փոխանցուելով հասած են առ մեզ:... Աստուածաշունչ տառից բովանդակութեան մէջ, ի ցուցակս գրոց, կան ալնպիսի մասունք, որ նոյն սուրբ մատենին հետ երկրորդական վերաբերութիւն ունին: Այս գրութեանց ներքին և մատենագրական արժէք կը բռնադատեն զմեզ համառօտիւ խօսիլ վրանին: Այն Նախադրութիւնք, որ ի գլուխ ամէն մատենից աստուածաշունչ տառից հնոյ կտակարանին կը գտնուին, 1) արդեօք սկզբնագիրք են առ մեզ, թէ թարգմանութիւնք լատար լեզուաց, 2) ունին արդեօք զայն հնութիւն, ինչ որ Սուրբ Գրոց թարգմանութեան կուտան ստուգահաւատ աւանդութիւնք և պատմութիւն»:

Թողնում ենք մեր հոգևորականներին

հետաքրքրել այդ լուծածով, եթէ միայն մութ լեզուն չի ձանձրացնիլ նրանց: Բացի այս բոլորից «Հալականք»-ում զետեղած են «Խրատք խիկարի» ահա այս բովանդակ միամիտ փիլիսոփայութիւններ:

«Որդեակ, թէ բարձր է չեմ տանք, երկալն որպէս կանգունս եօթն, չորժամ մտանիցես՝ խոնարհեց՝ զգլուխն քո»: Թէ ոչ, պէտք է աւելացնէին, զլուսդ կը կպչի շնմին և կը ցաւի:... Նոյն «Հալականք»-ում է և «Տաղ ի լարութիւն Տեառն»... «Վիտք չաւիտեանս ամէն» — և վերջացաւ այն բաժանմունքը, որը պէտք է ներկայացնէր գիտնական հետազոտութիւններ և ուսումնասիրութիւններ հայկական լեզուի, գրականութեան, պատմութեան և Հայաստանի աշխարհագրութեան, և անցեալ ու արդի վիճակին վերաբերեալ լուծածներ: Բացի այդ, նա պէտք է տար ամփոփ զեկուցումն եւրոպական գիտնականներից այդ հարցերի նկատմամբ արածների: Այսպէս ենք մենք հասկանում «Հալականք»-ը և կարծում ենք որ զանազան ծամամած, աննշան հարցերի կրկնութիւնները կամ խիկարի միամտութիւնները և եկեղեցական տաղերը արժանի չեն զետեղւելու մի ալդպիսի բաժանմունքում:

Տեսնենք այժմ՝ ինչ է «Բաղմա վէպի» ալսպէս անւանւած «Բանասիրականք»-ը: Հ. Ք. Քուշներեանի «Նոր ջրմուղ Թէոդոսիոյ» լուծածից իմանում ենք, որ Անեցի հայ գաղթականութիւնը XV և XVI դարերում Թէոդոսիայի մէջ արհեստական աղբիւրներ է չինած լինում քաղաքին ջուր մատակարարելու համար: 1778

թւին, ուսաներից ալդ քաղաքի առման միջոցին, աղբիւրները քարուքանդ են լինում ու ջրերը ցամաքում: «Հալաղգի նկարչապետ Յ. Ալվաղեանը» անցեալ տարի կատարած իր 50-ամեակի վիշտակ՝ քաղաքին ձրի նւիրում է 50,000 գոլ ջուր քաղաքին մօտ գտնուող իր սեպական դիւղի ինքնարուղիս աղբիւրից: Ջուրը հասցրին քաղաքը 1888 թ. սեպտ. 18-ին: Յետոյ գալիս է ալդ օրւայ հանդիսի նկարագիրը. «երկալնաձիգ սեղանները՝ ակորոժագրգիւ ըմպելիօք և ճաշակելիօք», «փրփրադեղ բաժակք լցած շամփալնի դիւնով» և այլն: Բացի ալդ բանասիրականից՝ կա և մի փոքրիկ պատկեր «Եղնիկ», որը զանաղանում է «Բաղմալէպի» միւս գրածներից իւր մատչելի լեզուով, իսկ բովանդակութիւնը շատ լարմար է մի մանկական ամսագրի համար: Բացի այս ինքնուրոյն արձակ լեզւածներից, տպւում է և Էլմօնդ դէ Ամիչիսի «Սիրտ» գրքի թարգմանութիւնը պօլսեցւոյ բարբառով: Ալդ թարգմանութեան մէջ չաճախ պատահում է «փոխան (?) վարժապետին» (փոխանորդ վարժապետի տեղ) խօսքերը:

«Բանասիրականք»-ի մնացածը բաղկացած է առածներից, ոտանաւորներից և առակներից: Ահա ինչ տեսակ իմաստալից առածներ են. — Մանուկն ծնանի՝ մեռնելու համար. Իսկ տունն կանգնի՝ ընկնելու համար:

Յետոյ գալիս են «Օձ ու Ձուկը», «Կաղամախ և Խնձորենի» և այլն անհամ ու սրամոռութիւնից զուրկ առակները: Ամեն մարդու բան չի առակ գրելը և Մխիթարեանները,

քանի որ չ'ունին եղպոսների, Լաֆօնտէնների և Կրըլօյնների պէս տաղանդներ, լաւ կ'անեն թողնեն իրանց ալդ անվաջող փորձերը:

«Բանասիրականք»-ում կան և ոտանաւորներ. երկու դրաբար անգոյն թարգմանութիւն՝ «Չարչարածաղիկ—կոմսուհի Յովհաննատը Շամպրէօնի» և «Որոտեալ Փլակկոսի առ Հասարակապետութիւն» երկու աշխարհաբար և երկու դրաբար ինքնուրոյն ոտանաւորներ:

«Մալր առ շիրմօք վաղամեռիկ դստեր» «եղերերգութիւն»-ը (երես 66) սկսւում է. ալսպէս.

Սուգ եմ սուգ եմ մըտել, ճիկեարս
խորովի,
Է՛ մահ, վիմ սիրտ մըխիր քո նետ
կորովի...

Դէհ, հըմի սըպանես զլա՛ հոգուս
դուշման,
Ու ճափասըս թորկես լուկ զահրի
նըման և ալլն:

Այս երկար «եղերերգութիւնը» մի ժողովրդական երգ չէ, ալ արւեստական և ոչինչ տպաւորութիւն չը թողնող մի ինչ որ «Ալիք» բանաստեղծի շարադրածը: Ալդ տեսակ երգեր ժողովրդական լեզուով գրած և շատերը անկեղծ զգացմունքով լի՝ կարելի է գտնել մեր եկեղեցիներում գործածուող «Մեծ Մաշտոց» գրքում: Այս վերջինի և «Բաղմալէպի» բանաստեղծի գրածքների մէջ տարբերութիւնը սա է, որ մէկում (Մաշտոց) կա անկեղծ, բոլան զգացմունք, իսկ միւսում՝ (Բաղմալէպ) արւեստական, չինծու («ա՛խ ու հ՛հ») եր:

Իսկ «Մալր առ Մանկիկ» ոտանաւորի բովանդակութիւնը այս է (երես 68).

Հիւանդ մանկան օրօրոցին նըս-
տած քով,
Յուրտ մէկ գիշեր՝ մալրիկն ան-
ձալն կ'աղօթէր.
Գէմքըն հիւծեալ, աչքըն լցուած
արցունքով՝
Փոքրիկ շրթամբ մընչէր. «Որդւոյս
գըթն, Տէր»... .

Բանաստեղծը զգացւած է, նա խղ-
ճում է խեղճ մօրը և խորհուրդ է տա-
լիս նրան մի բօլ լաց լինել. —

Լաց, մալրիկ, լաց, քիչ են արցունք,
հօ լաց դուն.

Լաց, հօ, ալո՛, գուցէ Աստուած ո-
ղորմի.

Եւ մալրը հետևում է բանաստեղծի՝
կարապետ Ռ. Ոսկեանի՝ բարի խոր-
հրդին և աչքքան լաց է լինում, որ՝
Անդէն անզօր ինկաւ գետին խե-
լակդ:

Ան ժամանակ բանաստեղծը օգնու-
թեան է կանչում «անճառ սիրու Քե-
րովբէ»-ին և

Սենեակն կանկարծ կարծես մի լոյս
ողողեց,

Եւ գեղադէմ աննիւթ հրեշտակ մի
սիրուն,

Օրօրոցին փոքրիկ կեցած եղեր ւեց
թևոյն հեղիկ դիպաւ մանկան ա-
չերուն:

Ճիշտ նույն պահուն շարժեցան մօրն
ալ աչեր,

Եւ ի կուրծքէն թրուաւ հառաչ մի
մեղմիկ.

Մինչդեռ մանկան ձալնիկն անուշ
մըրմընջէր,

«Մալրիկ, զարթի՛ր, ես քիչ մի լաւ
եմ ալժմիկ»:

Տեսնում էք, ինչ հրաշքներ է անում
«Բաղմալէպի» բանաստեղծը: Ախրհօ,

որ մենք էլ չ'ունինք աղպիսի բա-
նաստեղծներ. այն ժամանակ մեր
մալրերը աղատւած կը լինէին բժշկ-
ներին փող տալուց...

Մինչև այս պոպէս կատարուում է,
ահա ինչ տեսարան է ներկայացնում
«Գողգոթա լեռը» (հրեւ 71). — գերեզ-
մանները բացուում են, լեռները շարժ-
ւում և

Գիսախուլւ անդէն Ադամ և քնալից
Ըղղիւսին ի վեր առ և լոտին կանգ-
նեցաւ:

Յեղեղեաց շուրջ զիւրեաւ ըզբիւր-
սըն բրժոտ,

Ջարմանաւքանչ լըցեալ ահիւ պա-
կուցմամբ...

Բայց թողնենք, որ այս «Մինժոնի» բա-
նաստեղծը շարունակէ աղպիսի զար-
հուրելի բաներ դուրս տալ, իսկ մենք
հետևենք Հ. Թ. Թ.-ին, որին իր սան-
ձակոծ Պէդասը տանում է հասցնում
մի «Կործանեալ եկեղեցւոյ ավերակ-
ների մօտ» (հրեւ 111), ուր՝

Լուսաճաճանչ ակն արեգին, ամպք
ի ստուեր,

Ի քարաժեռան առնուն չրջան դաբ-
ձադարձ.

Լուսին ընդ ճեղս ոստոց չածեալ
տարուբեր

Յընցըղկէ գշողս իւր արծաթիս
սիրարծած:

Անդր ի խորէջս և աստ զորմովք
կիստփալ՝

Տունկը ջովացեալ, բոլս խիտ առ
խիտ թարմատար և ալն:

Ահա «Բաղմալէպի» «Բանասիրա-
կանք»-ի բովանդակութիւնը: Մտում
է մեզ հիմա գաղափար կաղմել «Գի-
տականք» բաժանմունքի մասին:

«Հնձող մեքենալք» լօղւածով

հայր-սուրբերը նկարագրում են մի քանի հնձող մեքենաների կազմութիւնը, տալիս են երեք նկարներ, խօսում են այդ մեքենաների գործածութեան մասին և բացատրում են այն «առաւելութիւնը, որ ունի հնձող մեքենան դերանդեաց վերայ, զոր կը գործածեն աղքատ և միջակ կաւուածատեարք»։ Ասելն աւելորդ է, որ լեզուն և բացատրութիւնները բոլորովին անմատչելի են շինականին։ Ո՞վ կարող է ընդգէտ լինել, որ քանի ալդ ամսաթիւերթը «Բազմա—վէպ» է, նորա մէջ կարող են զուտ լեզուաբանական լօգածների կողքին զետեղած լինել և՛ առականեր, և՛ առածներ, և՛ անմարսելի ոտանաւորներ, և՛ «կաղերի» մասին լօգած, և՛ «հնձող մեքենալք», և «Պուլանժէ», և այլն և այլն։

Բայց մարդ էլի իրան հարց է առաջարկում, «ա՛խր, ի՞նչ նպատակով են ալդ «Հնձող մեքենալք» լօգածը գրել, է՞»։ Գուցէ Ամբրիկա և Ներոյա գաղթած հայերի համար. բայց նրանք ապրելով այդ լուսաւոր և բարօրութիւն վայելող երկրների քաղաքներում, երկրագործութեան հետ բան չ'ունին, եթէ ունենան էլ, մասնադիտական բաղմաթիւ թերթեր են այնտեղ հրատարակում. իսկ տարէնը մի երկու անգամ լոյս տեսած պատահական լօգածների համար ալդ երկրագործը «Բաղմալէպը» չի կարող բերել տալ։ Նւ վերջապէս ինքը լօգածը մի այնպիսի գրածք չի, որ իբրեւ մի հետաքրքրական նորութիւն, մի մանրաւոր կարդացւի. Ուրեմն երևի որ և գործնական տեսակէտ են ու-

նեցել տալողները։ Գուցէ Ռուսատանում ապրող հայերի համար է, Բայց նախ մեր երկրագործը չի ստանում «Բաղմալէպ», չի էլ ստանալ, որովհետեւ ոչ նրա լեզուից և ոչ լօգածներից ոչնչից ոչինչ չի հասկանալ. եթէ հասկանալ էլ, էլի մի որ և է պատահական գիւղատնտեսական լօգածի համար «Բաղմալէպ» բերել տալ չի կարող։ Այլ խնդիր է, եթէ հրատարակէր մի զուտ շինական էժան թերթ, որը մատչելի, պարզ լեզուով հաղորդէր գիւղացուն գործնական, հնչտ իրագործելի, անհրաժեշտ գիտելիքներ և տեղեկութիւններ. բայց, եթէ ալդ պահանջը ըզգացւէր, ռուսահայերը բաւական պատրաստ և երկրի ու գիւղացիների կեանքի պալմաններին ի մօտոջ ծանօթ մարդիկ ունին՝ ալդ իրագործելու, առանց սպասելու, որ հեռուից, Վենետիկի հայր-սուրբերը պատահաբար մի կցկտուր և գործնական ոչինչ հետևանք չ'ունեցող գիւղատնտեսական լօգած տպեն։ Մնում է ենթադրել, որ «Բաղմալէպը» ի նկատի ունի թիւրքիան և թիւրքաց-Հայաստանի ժողովուրդը։ Բայց ալդ դէպքում մնում է միայն բոլոր վերև բերած առարկութիւններին աւելացնել մի քանի ղիտողութիւններ ևս։ Թիւրքա-հայաստանցին ուրախ կը լինէր, եթէ գերանդիլի համար էլ հունձ լինէր և նա դեռ շատ և շատ հեռու է մինչև անգամ այն «աղքատ և միջակ եւրոպական կաւուածատէրերից, որոնք գերանդիլ կը գործածեն», ինչպէս ասում են Մխիթարեանք։ Էլ որտեղ մնաց, որ խեղճ հաջ շինականները թիւրքիալում ճանապարհներ չը լինելով և

գրպաններում «փարա» չ'ունենալով հանդերձ, մտածեն «Սասլըրն ամիր-կացուլ միաձի հնձող մեքենայ» կամ «Ալպարէ երկաձի հնձող մեքենայ» հեռու Եւրոպայից բերելու մասին: Իսկ հալ արհեստաւորը ոչ կարող է օգտուել «Քաղմալէպի» մի քանի կցկտուր տեղեկութիւններէն և ալդ տեսակ մեքենաներ չ'ինել. ոչ էլ եթէ գիցուք մի կերպ գիւղացիք բերել տան ալդ մեքենան և եթէ նա կտորւի կամ խանգարւի կարկտել ու նորից վերաշինել: Ել չենք ասում, որ ալդ խաւար երկրում գիւղացիք ոչ կարողալ գիտեն և ոչ միջոց ունին մի թերթ ըստանալու: Եթէ հայր-սուրբերը խղճում են թիւրքա-հայաստանցուն, կալ մի գործնական միջոց նրան օգնելու — ուղարկել թիւրքա-Հայաստան եւրոպական պարզ, թեթեւ և ամուր գութաններ՝ գործին տեղեկալ մի մարդ էլ հետը, որ փոխարէն ծանր, վերին աստիճանի անչարմար նահապետական գութանների, որոնց լծում են մօտ 10 զուգ եղ կամ գոմէշ և հերկելիս տաժանելի աշխատութիւն են գործ դնում — մոցնէր ալդ տեսակ գութանների գործածումը: Ալդ գութանների կազմութիւնը ալնքան պարզ է, որ հեշտութեամբ հալ ընդունակ արհեստաւորը կը սովորէր ալդ տեսակ գութաններ չինելը և ալնուհետև տեղումը պատրաստած ալդ գործիքները ի հարկէ աւելի մատչելի կը լինէին գիւղացիներին: Իսկ ընթերցանութեան միջոցով տարածել գիւղատնտեսական գիտելիքներ միաձն ալն կերպ կարելի է, ինչպէս վերևը վիշցիք. բայց դա

էլ, առ ալմ, միաձն pia desideria է:

Ուրեմն ինչ միտք ունի ալդ տեսակ լօղածներ տակը: Ալդ նման է ահա ինչի. Մի շատ աղքատ ու քաղցած մարդ գիւմում է մի հարուստ պարոնի և ողորմութիւն է խնդրում: Ալդ պարոնը ցուց է տալիս նրան մի փառակալմ գիրք, ուր գրած է թէ ինչպէս լաւ, համեղ, բայց թանկ կերակուրներ պատրաստել, և ասում է.

— Ահա, սիրելիս, թէև դու մերկ ես ու քաղցած, բայց ալդ ոչինչ, ա՛ռ ալս գիրքը և կարդա...

— Ահա, քեզ զուրբան, կարդալ չը գիտեմ:

— Դա էլ ոչինչ, շարունակում է պարոնը ուշադրութիւն չը դարձնելով աղքատի ասածի վրայ, դու միաձն թերթիւր ալդ չքեղ գրքի երեսները և տես ինչպիսի լաւ, համեղ կերակուրներ են լինում մեծատունների համար...

— Ալն, մի կտոր հաց եմ ուղում, հաց, արտասուքը աչքերին պաղատում է խեղճը:

— Է՛հ, ակամախ, քեզ բան եմ ասում. միթէ չը գիտես, «ոչ միաձն հացիւ կեցցէ մարդ...»

Դառնա՜ք «Դիտականք»-ի միւս լօղածներին: «Հնձող մեքենայք»-ին հետևում են «Ուսումնական մանրալուրք». ահա, օրինակ, ինչ բաների մասին. «Նոր մակաբոլծ ճճի մի ի մարդոս», «չան հազի միքրոպն», «ամենապարզ փորձեր կաղերու խոտութեան» և ալն: Ալդ մասը, իբրև քրօնիկոն, բաւականին չաջող է:

Յետոյ գալիս է նոյն «Դիտականքում» (?)... «Քաղաքականտնութիւն»: Զարմանալի է, որ դեռ չատերը մեղաւորում շարունակում են «Դաղդիա» և

«Գաղիացի» բառերը դորժած են՝ «Պրանսիա» և «Պրանսիացի»-ի տեղ։ «Բաղմալէս»-ի «քաղաքական տեսութիւնները» ոչ ալ ինչ են, եթէ ոչ կատարւող անցքերի մասին մակերևութալին, կարճ տեղեկութիւններ. օրինակ ասպէս. «Ֆլօքէ պաշտօնարանն (?) երբ իւր վերջին խնդիրը (իսկ ռը—ալդաւելորդ է հրել) մերժուեցաւ իտալեանէն՝ ընկաւ).... «Պուլանժէ զօրավարը այս օրերս Գուռի հացկերութիւն մէջ նշանաւոր ճառախօսութիւն մ'ըրաւ.

ումանք իր խօսքերուն քաղաքական նշանաւոր հանգամանք չեն ընծայեր, բայց մեծամասնութիւնը կը դատէ զան լիրաւի քաղաքական դէպք մը»։

Մի նկատողութիւն էլ արտաքինի մասին. պէտք է, որ ամսական հրատարակութիւնը մի ամփոփ համար կազմի ինչպէս և արած է ապրիլի տետրակում, բայց որ կարած լինի և ոչ անկապ, առանձին թերթիկներէից բաղկացած։

Լ. Ս.